

ԼԵԶՈՒ - ՆՈՐՄԱ* - ՀԱՍՆԱԿԱՐԳ

Լ. Կ. ԵԶԵԿՅԱՆ

Լեզվական նորմա հասկացությունը տարբեր ըմբռնումներ ու մեկնաբանություններ ունի: Ամենից առաջ այն պայմանավորված է գրական լեզվի առկայությամբ և սերտորեն առնչվում է նրա հետ, այսինքն՝ լեզվական նորման գործում է միայն այն դեպքում, երբ կա գրական լեզու, կամ տվյալ համազգային լեզուն ունի գրական լեզվի մակարդակ ու գործառույթ:

Իր գոյության և զարգացման տարբեր փուլերում գրական լեզուն միևնույն չափերով ու աստիճանով չի ենթարկվում լեզվական նորմային, այնուամենայնիվ գրական լեզուն և լեզվական նորման լեզվի զարգացման բոլոր փուլերում համարյա միմյանց համապատասխանում են: Այս առումով էլ նորմայի վերլուծությունը կարևոր դեր է խաղում գրական լեզվի ուսումնասիրության ժամանակ:

Պատմական առումով գրական լեզվի ուսումնասիրությունն ավելի վաղ պատմություն ունի, քան լեզվական նորմայինը, քանի որ նորմայի ըմբռնումը երկար ժամանակ մի տեսակ անընդունելի էր, ոչ գիտական: Դեռևս XX դ. 30-ական թվականներին Օ. Եսպերսենը նկատել է, որ լեզվի պատմաբանները, որոնք սովորաբար հաճույքով են զբաղվում լեզվական փաստերի ուսումնասիրությամբ, լեզվական որոշակի օրինաչափությունների փոփոխության բացահայտումով, բարեխղճորեն արձանագրում են դրանք, բայց նրանք ընդհանրապես լեզվական նորմային չէին անդրադառնում՝ հաճախ այն համարելով դոգմատիկ (ավանդական) հասկացություն¹: Նրանցից շատերը նույնիսկ գտնում էին, որ լեզվական նորմայի հարցերով պետք է զբաղվեն միայն դպրոցի ուսուցիչները և ոչ գիտնականները: Բայց փաստը մնում է փաստ, որ որքան էլ լեզվական նորման պահպանողական կամ ավանդապահ լինի, այն նույնպես պատմական կատեգորիա է, հասկացություն, ինչպես և գրական լեզուն:

Նորմայի քննությանը պետք է և կարելի է անդրադառնալ ոչ միայն լեզվի պատմական զարգացման համաժամանակյա կտրվածքով, այլ նաև պատմականորեն, տարժամանակյա ելակետով ու սկզբունքներով, քանի որ լեզվական նորման ձևավորվում է նաև տարժամանակյա մոտեցմամբ, որը, սակայն, միայն վերջերս է արժանանում ուսումնասիրողների ուշադրությանը: Որքան էլ առաջին հայացքից տարօրինակ է, գրական լեզվում կատարվող փոփոխությունները չեն կարող արգելք լինել պատմական յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար սահմանելու համապատասխան նորմա կամ նորմատիվ համակարգ: Բայց և այնպես, որքան էլ լեզվաբանության մեջ նորմայի նկատմամբ եղած ուշադրությունն ավելի ուշ պատմական իրողություն է, այնուամենայնիվ նորմայի զգացողությունը կամ

* Նորմա բառը օտարաբանություն է, առաջարկում ենք դրա փոխարեն գործածել **չափակարգ** հայերեն համարժեքը: Նկատի ունենալով, որ այն լիովին արտահայտում է տվյալ հասկացության իմաստը, բովանդակությունը և ունի բառակազմական լայն հնարավորություններ, ինչպես՝ չափակարգել, չափակարգում, չափակարգային և այլն: Կարծում ենք նաև, որ այն բարեհունչ է՝ **լեզվական չափակարգ**:

¹ Տե՛ս «Грамматика и норма», М., 1977, էջ 68:

նրա պահպանումը միշտ էլ եղել է և այն նկատելի է հենց նշանավոր գործիչների կողմից, կիրառվել նրանց և՛ հրապարակախոսական, և՛ գրական, և՛ գեղարվեստական ստեղծագործություններում:

Պրահայի լեզվաբանական դպրոցի ակադեմիկոսներ Կ. Զավրա-նեկը տեղին է նկատել, որ լեզվական նորմայի հասկացությունն ավելի լայն է, քան նրա կողավորումը (օրինակարգավորումը, համակարգումը), քանի որ վերջինս կարող է նույնիսկ իրականացվել դպրոցական քերականության միջոցով՝ վկայա-կոչելով «թույլատրելիի և ոչ թույլատրելիի» սահմանները²:

Մի փոքր այլ է նորմայի հարցը. այն ամենից առաջ պետք է հենվի լեզվի կեն-դանի գոյության ու նրա գործածության վրա, և հաշվի առնվեն ոչ միայն գրավոր, գրական լեզվի առանձնահատկությունները, այլև բանավոր, խոսակցական լեզվի իրողությունները, այլապես այն չէր կարող համարվել կենդանի, գործող նորմա, գործող համակարգ:

Նորման կենդանի, շարժուն, դինամիկ, հաճախ նաև փոփոխական իրողու-թյուն է. դրանով հանդերձ այն չպետք է կորցնի իր թելադրող ուժը, պահանջկոտու-թյունը լեզվի տվյալ փուլում գործող և ընդունված նորմայի չափանիշներով:

Յուրաքանչյուր հեղինակ (գրող, խոսող), որքան էլ պահպանում է լեզվի գոր-ծող նորման, տվյալ լեզվի անընդհատ զարգացման ազդեցությամբ, ներգործու-թյամբ ու պահանջով, միաժամանակ պետք է ձգտի նաև թարմացնելու, վերանա-յելու լեզվական որոշ իրողություններ, այլ կերպ ասած՝ նորման չի կարող քարա-ցած լինել լեզվի զարգացման տարբեր փուլերում:

Լեզվական նորմայի հետ սերտորեն առնչվում է «համակարգ» (սիստեմ) ըմ-բռնումը, այսինքն՝ այն, թե ինչպիսի հարաբերության մեջ են դրանք գտնվում ի-րար նկատմամբ: Այս հարցում ևս լեզվաբանության մեջ եղել են տարբեր կարծիք-ներ: Ըստ Ա. Ա. Լեոնտևի՝ նորման անհամակարգ է, այսինքն՝ այն չի առնչվում որևէ համակարգի հետ:

Վ. Ա. Չվեգինցևը նորման համարում է լեզվական գործող օրենքների (գոր-ծունեության) սահմաններից դուրս: Ըստ այս տեսության՝ նորման մարդու, անհա-տի նպատակադրված գործունեության արդյունքն է այն դեպքում, երբ լեզվի օ-րենքները օբյեկտիվորեն գոյություն ունեն անկախ խոսողի կամքից³:

Մեկ այլ ուսումնասիրության մեջ (Է. Կոսերեու, «Համակարգ, նորմա և խոսք») հաղորդակցման ամենամեծ միավորը համարվում է խոսքը իր ընդհանուր և մասնավոր դրսևորումների բազմազանությամբ, և ապա՝ խոսքի հետ հավասա-րապես դիտվում է ոչ միայն լեզուն որպես որոշակի հաղորդակցման համակարգ, այլև նկատի է առնվում առանձին անհատների խոսքը՝ իր բոլոր անհատական յուրահատկություններով և անհատական շեղումներով: Խոսքից հետո այս համա-կարգում հաջորդ ոլորտն արդեն նորման է, որը հենվում է ոչ միայն քերականու-թյան կանոնների և օրենքների վրա, այլև հաճախ այդ օրենքների ու կանոնների շեղումների վրա (հիշենք հայերենի մի շարք անկանոն բայեր՝ *ուտել-կերա*, *լինել-եղա*, *գալ-եկա* և այլն, ինչպես նաև ձայնեղ բաղաձայնների շնչեղ խուլ արտասա-նությունը): Իսկ ինչ վերաբերում է համակարգին, ապա այն արդեն որոշակի կախման հարաբերության մեջ է գտնվում լեզվական ընդունված նորմայից: Ըստ այդ տեսության՝ նորման գտնվում է խոսքի և համակարգի միջև⁴:

Լեզվական նորման չի կարող անհամակարգ կամ, ինչպես ոմանք նշում են, օրենքից դուրս լինել, քանի որ այն ամենից առաջ առնչվում է գրական լեզվին:

² Տե՛ս **В. А. Цукович**, *Норма и ее кодификация*, М., 1970, էջ 31:

³ Տե՛ս **П. А. Звягинцев**, *Теоретическая и прикладная лингвистика*, М., 1968, էջ 105:

⁴ Տե՛ս «Грамматика и норма», էջ 78-81:

Լեզվական նորմայի անհամակարգայնությունը (եթե իրականում այդպես լիներ) առաջին հերթին պետք է պայմանավորեր նաև գրական լեզվի համապատասխան անհամակարգայնությունը: Բայց դա իրականում այդպես չէ, քանի որ գրական լեզուն, նրա քերականական կառուցվածքը չի կարող լինել առանց որոշակի համակարգերի. գրական լեզվի յուրաքանչյուր օրինաչափություն անկասկած հենվում է համապատասխան համակարգի վրա, ուստի և նորման նույնպես չի կարող գործել, գոյություն ունենալ առանց որոշակի համակարգի:

Նորման կարող է որոշ չափով դժվարացնել, բարդացնել գրական լեզվի քերականական այս կամ այն իրողության համակարգայնությունը: Դրանով իսկ այն բացահայտում է լեզվի զարգացման բազմաստիճանությունը, միաժամանակ ցույց տալիս այդ համակարգում երբեմն նկատելի մասնակի հակադրությունները:

Համակարգի բարդությունը հանգեցնում է ոչ թե նրա անհամակարգայնությանը, այլ նրա բազմապլանությանը, որը և նկատելի է նորմայի, խոսքի և համակարգի փոխգործունեության միջև:

Ասվեց, որ նորման գտնվում է խոսքի և համակարգի միջև: Կան պատահական, անհատական լեզվական իրողություններ, նաև անհատական-մասնավոր (ոչ ընդունելի) շեղումներ, որոնք կարող են ինչ-որ չափով թույլատրելի լինել միայն խոսքային ոլորտին (ինչպես՝ բարբառային տարրեր, անհարկի օտարաբանություններ, սխալ շեշտադրումներ, ոչ տեղին բառագործածում և այլն), բայց դրանք թույլատրելի և ընդունելի չեն նորմայի ոլորտում, առավել ևս՝ համակարգի ոլորտում, համակարգի ներսում:

Փաստը մնում է փաստ, որ նորմայի հայեցակետով ընտրվում են լեզվական այն միջոցները, որոնք արդեն կան համակարգում կամ կարող են մտնել այդ համակարգի մեջ: Լավագույն դեպքում նորման չի կարող համընկնել համակարգի հետ, քանի որ այն ավելի լայն հասկացություն է, լայն ըմբռնում և կարող է ներառել նաև բազմաթիվ տարաբնույթ համակարգեր: Այս առումով էլ նորման բազմահամակարգային է և ոչ միայն բազմապլան (ինչպես հայերենի հոլովման, խոնարհման ոլորտներում կարող են լինել տարբեր, բազմաբնույթ համակարգեր կամ ենթահամակարգեր):

Նորմայի մեջ կարող են լինել լեզվական իրողություններ, որոնք տվյալ դեպքում և այդ վիճակում հակադիր են համակարգին, բայց և այնպես դրանք անհրաժեշտ իրողություններ են և առանձին վերցրած կարող են այդ համակարգի ներսում կազմել ենթահամակարգեր, ինչպես հայերենի անկանոն բայերը՝ *ուտել-կերա* և ոչ թե *ուտեցի*, կամ արտասանության ժամանակ *բ, գ, դ, ժ, ջ* ձայնեղ բաղաձայնները՝ *բ-ից* և *դ-ից* հետո շնչեղացումը:

Ինչպես նորման, այնպես և լեզվական որոշակի մակարդակի համակարգը, ունեն իրենց օրինաչափ պատմությունն ու զարգացման պատմական ընթացքը, որոնք, ճիշտ է, չեն նույնանում, բայց և հաճախ համապատասխանում են իրար:

Նորմայի դրսևորման յուրաքանչյուր իրողություն կամ պատմություն սերտորեն առնչվում է գրական լեզվի պատմությանը: Որպես կանոն նորման լեզվից վերցնում, օրինականացնում է այն ամենը, ինչ արդեն ուղղակի կամ անուղղակիորեն կա համակարգում (այդ թվում նաև շեղումները), ուստի և դրանք չեն կարող հակադրվել և, ինչպես արդեն նշել ենք, գտնվում են փոխադարձ կապակցության մեջ: Ուրեմն և՛ վերջիվերջո նորման հենվում է համակարգի (կամ համակարգերի) վրա:

Ոմանց կարծիքով, գրական լեզվի նորմավորումը առաջ է բերում լեզվի, լեզվական միջոցների աղքատացում: Մինչդեռ դա բոլորովին այդպես չէ, եթե նկատի չունենանք առանձին դեպքերում նկատվող ծայրահեղությունները (ինչպես՝ անհարկի մաքրանոլությունը, միայն ազգային ձևերով կաղապարվելու միտումը և

այլն): Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև արտասանության մեջ, բառային ու քերականական տարբեր համակարգերում փոխառությունների և օտարաբանությունների հստակ տարբերակումը և նրանցից յուրաքանչյուրի անհրաժեշտությունը լեզվական նորմայի պահանջներին համապատասխան (նույնը նաև՝ ազգային և փոխառյալ հոմանիշների):

Ինչպես նկատում է Ռ. Բուդաղովը, գրական լեզվի հարստության չափանիշը որոշվում է ոչ թե տվյալ լեզուն նոր տիրապետողների կամ ուսումնասիրողների տեսանկյունից (քանի որ նրանց համար դեռևս դժվար կլինի ծանոթանալ այդ լեզվի բոլոր նրբերանգներին ու հարստությանը), այլ այն մարդկանց դիրքերից, ովքեր արդեն լավ են տիրապետում այդ լեզվին և ձգտում են ընդլայնել նրա արտահայտչական պաշարներն ու հնարավորությունները, ինչպես նաև լեզվական երանգավորումների իրենց ընկալումներն ու ունակությունները:

Գրական լեզվի հարստությունն ու նրա նորմավորումը երբեք չեն կարող հակադրվել միմյանց, միայն պետք է նկատի ունենալ, որ լեզուն որքան աղքատ է, այնքան հեշտ է նրա նորմավորումը և հակառակը՝ լեզվական միջոցներով, ոճական հնարանքներով հարուստ լեզվի նորմավորումը համեմատաբար դժվար է:

Բայց և այնպես, նորմավորված հարուստ գրական լեզուն ուժեղ և արտահայտիչ է դառնում, քան նորմավորված աղքատ լեզուն: Անշուշտ, տարբերակվում են գրավոր ոճի կամ խոսքի և բանավոր խոսքի նորմայի ըմբռումները, բնականաբար գրավոր լեզվի նորման ավելի կատեգորիկ ու խիստ է, քան բանավոր լեզվինը: Այս տարբերակումն ավելի ակնհայտ է արդի գրական հայերենի համակարգում, քանի որ զգալիորեն տարբերվում են գրական-գրավոր լեզվի և բանավոր-խոսակցական լեզուների համակարգերը (բառապաշար, քերականական միջարք իրողություններ և այլն), չնայած այդ տարբերությունները, կարելի է ասել, խիստ ակնհայտ չեն, մանավանդ, եթե նկատի ունենանք գրության և արտասանության համակարգերը*:

Նշված տարբերություններն արդի հայերենի գրական լեզվում հիմնականում նկատելի են մեկ ոլորտում, երբ ձայնեղ բաղաձայններն արտաբերվում են որպես շնչեղ խուլեր: Այս իրողությունը որքան էլ նորմայից որոշակի շեղում է, բայց քանի որ այն հանդես է գալիս որպես համակարգ, ուստի և ունի նորմատիվ բնույթ:

Մինևույն գրական լեզվի նորման փոփոխական է նաև այնքանով, որ լեզվական նույն իրողությունը տարբեր տարածքներում տարբեր նորմավորում կարող է ունենալ: Այսպես՝ գրական հայերենի նորմավորումը կամ նորմայի նկատմամբ եղած պահանջը կարող է տարբեր լինել մեզ մոտ՝ Հայաստանում, և բոլորովին տարբեր նրա սահմաններից դուրս, ինչպես ասենք՝ Իրանում, Ռուսաստանում, Վրաստանում կամ այլ տարածքներում: Սա նշանակում է, որ նույն գրական լեզվի նորման մի դեպքում ավելի կայուն է, մեկ այլ դեպքում՝ ոչ: Ուրեմն՝ գրական լեզվի նորման կախված է ոչ միայն պատմական, այլ նաև համաժամանակյա կամ նույնիսկ տարժամանակյա աշխարհագրական գործոններից:

Հեռավոր շրջաններից եկած յուրաքանչյուր անհատի համար միևնույն գրական լեզվի նորման այլ պահանջ և դրսևորում ունի, քան ասենք մայրաքաղաքում ծնված և համապատասխան լեզվական միջավայրում մեծացած անհատի համար, որի պատճառով էլ կարող են առաջանալ լեզվական նորմայի տարբեր դրսևորումներ ու պահանջներ:

* Կան լեզուներ, որոնցում այդպիսի տարբերություն համարյա չկա: Դրանք հատկապես այն լեզուներն են, որտեղ տարածքային-լեզվական տարբերակումներն այնքան էլ մեծ չեն, չկան նաև բարբառային էական տարբերակներ: Գրավոր և բանավոր լեզուների տարբերակումը համարյա նկատելի չէ կամ էական տարբերություններ չկան:

Նորման արտահայտում է նաև խոսքի մեջ ունեցած լեզվի գործառույթը, խոսողի և գրողի որոշակի գնահատողական վերաբերմունքը՝ *այսպես կարելի է, այսպես չի կարելի, այսպես ճիշտ է, այդպես սխալ է, այսպես խոսում են, այդպես չեն խոսում* և այլն: Այս հարաբերությունը ձևավորվում է նաև գրականության, գիտության ականավոր գործիչների, դպրոցների և այլ գործոնների ազդեցությամբ:

Եվ քանի որ նորման նաև լեզվի գործառական կառուցվածքի առանձնահատկություն է, յուրահատուկ դրսևորում, որ ստեղծվում է այդ լեզուն գործածող հանրության կողմից, մշտապես գործող փոխադարձ հասկանալիության պահանջով, ուստի և հենց այդ պահանջն էլ ստիպում է մարդկանց նախընտրելու այս կամ այն տարբերակը և հրաժարվելու մյուսներից, որպեսզի հասնեն լեզվական համակարգի միասնության:

Նորման կարգավորում է հատկապես խոսքի կառուցվածքի նշանային, լեզվական կողմը և իր մեջ չի ընդգրկում հաղորդակցման գործընթացի համար մի կարևորագույն հանգամանք՝ խոսքի հարաբերությունը իրականությանը, հասարակության, մարդկանց գիտակցությունն ու վարքագիծը: Խոսքը կարող է լինել ամբողջովին ճիշտ, այսինքն՝ համապատասխանել և չխախտել լեզվական նորման, բայց և անհասանելի, ոչ մատչելի սովորական ընկալողի համար: Այն կարող է լինել տրամաբանորեն անճշգրիտ և հակասական, բայց և միաժամանակ՝ ճիշտ, այն կարող է լինել ճշգրիտ, բայց և որոշակի դեպքերում բացարձակապես ոչ տեղին: Հենց սա էլ նշանակում է, որ ճշգրիտ գրել և խոսել դեռևս չի նշանակում լավ գրել կամ լավ խոսել:

Ուստի և լեզվական նորմային զուգահեռ գործում է նաև մի շատ կարևոր հանգամանք. մարդկանց խոսքային մշակույթը կարգավորում է մի կարևոր իրողություն՝ նպատահակարմարությունը:

Խոսողը կամ գրողը պետք է զգա իր իսկ կողմից գործածվող յուրաքանչյուր բառի, հնչերանգի, շարահյուսական կառույցների նպատակահարմարությունը տվյալ խոսքային միջավայրում: Միայն նորմայի և նպատակահարմարության խելամիտ, մտածված և ամուր կապը կապահովի առանձին անհատների և տվյալ հանրության խոսքի մշակույթը:

Խոսքային գործընթացում նորման բավականին խիստ է գործում, քանի որ թելադրվում է գործածվող լեզվի կառուցվածքով և համակարգով, այն պարտադիր է տվյալ լեզվով խոսող և գրող բոլոր անհատների համար, մինչդեռ նպատակահարմարությունը տրված չէ լեզվի կառուցվածքի և համակարգի կողմից, այն ստեղծվում է խոսողի և գրողի գիտակցությամբ, նրա նախաձեռնությամբ՝ ելնելով հաղորդակցման տվյալ պահից և իրավիճակից, այն ավելի շատ կամայական, անհատական բնույթ ունի:

Նորման տվյալ լեզվով խոսող անհատի կամ հանրության համար նույնական է, մինչդեռ նպատակահարմարությունն ունի տարբերությունների և տատանումների մի ամբողջ շարք, որը պայմանավորված է խոսքային իրավիճակով, գործառվող լեզվի տարբերակներով, խոսողների հասարակական տարբեր խմբերին պատկանելությամբ (մասնագիտական, տարիքային, սոցիալական և այլն), ինչպես նաև խոսքի, հաղորդակցման նպատակով և պայմաններով: Այստեղ արդեն կարևոր դեր է խաղում խոսքային իրադրությունը, խոսող-խոսակից հարաբերությունը, այլ կերպ ասած՝ ավելի է կարևորվում իրադրական, իսկ առավել ևս՝ լեզվական և խոսքային ոճերի հասկանալի քննությունն ու նրանց հստակ տարբերակումը:

Որոշ ուսումնասիրողներ լեզվական նորմայի ընթրումը ներկայացնում են նաև, այսպես կոչված, կողավորման (օրինակարգավորման) հետ ունեցած փոխհարաբերությամբ:

Ինչո՞վ են այս երկու հասկացություններն իրար մոտենում և ինչո՞վ են տարբերվում միմյանցից:

Նախ՝ նորման՝ իբրև ընդունված համակարգերի ամբողջություն, սահմանափակվում է միայն ցուցումով, հրահանգով, կարգադրության, պարտադրանքի քույլ աստիճանով, ըստ այն բանի, թե ինչպես է ընդունված խոսել կամ գրել, այսպես է հարկավոր խոսել կամ գրել, հետևաբար նորման հենվում է նաև սովորույթի վրա, գործածության ընդունված ձևերի վրա, մինչդեռ կողավորումը պաշտոնական, իրավաբանորեն ընդունված օրենքներն են, նրանց համակարգը, այսինքն՝ նորման այն է, ինչ կա լեզվում, ինչ ընդունված է օբյեկտիվորեն, մինչդեռ կողավորումը պարտադրանքի հասնող, իրավաբանական ուժ ունեցող օրենքների համակարգ է:

Ուրեմն՝ նորման հիմնականում արտացոլում է ինչպես ամբողջ լեզուն, այնպես և նրա կառուցվածքային բոլոր ոլորտները (հնչյունաբանություն, բառապաշար, բառակազմություն, քերականություն):

Համակարգային բնույթն անկախ է այդ լեզուն կրող կամ այդ լեզվով խոսող անհատի կամքից և գիտակցությունից: Այդ իսկ պատճառով չնայած նորմայի գոյությունը միշտ չի գիտակցվում, բայց օբյեկտիվորեն այն միշտ գոյություն ունի ցանկացած բնական լեզվում, նույնիսկ՝ առանձին բարբառներում:

Մինչդեռ կողավորումը նորմայի գիտակցական, դատողական անհրաժեշտությունն է, որ արտացոլված է տվյալ լեզուն կրողի լեզվական (լեզվաբանական) գիտակցության մեջ և ամրագրված համապատասխան գրավոր փաստաթղթերում: Նորման և նրա կողավորումը, որքան էլ փոխկապակցված են միմյանց հետ, այնուամենայնիվ երբեմն նաև հակադարձ հարաբերությունների մեջ են. առաջինը հենվում է համակարգի վրա, խոսքի և լեզվի զարգացման տարերային գործընթացի վրա, իսկ երկրորդը, որոշակիորեն կախված լինելով առաջինից, այսինքն՝ նորմայից, այնուամենայնիվ պայմանավորված է յուրաքանչյուր անհատի սոցիոլեզվաբանական մտածողությամբ, այդ անհատի հասարակական դիրքով և նրա լեզվական ունակություններով:

Л. К. ЕЗЕКЯН — *Язык-норма-система*. — В статье дается сперва понятие языковой нормы, потом различие между языковой и стилевой нормами и лишь затем — взаимоотношения между языковой и стилевой нормой и системой, ибо языковая норма в первую очередь связана с языковой системой.

Языковая норма обусловлена системой. Язык — это система и имеет разные проявления. Норма предполагает также некоторые отклонения от функционирующей системы.